մարուեցաւ, որը բանադրեց Դաւիթին և նորա աթոռն ապօրինի ճանաչեց։ Դորանից յետոյ, յայտնի չէ թէ ինչպէս, կրօնաւորները գողացան Աղթամարից Ս. Լուսաւորչի Աջը և հասուցին Գրիգոր Գ. Պահլաւունու ձեռքը։ Այդ իսկ ժամանակից և Ս. Աջը մնաց շարունակ Հայոց հայրապետների մօտ։ Ներսէս Գ. Շնորհալին (1165—1173 թ.) իւր ընդհանրական թղթի մէջ յիշում է օրհնութիւն Ս. Աջից. «Ողջոյն սիրոյ և խաղաղութեան, ասում է, հասցէ յաստուածընկալ և փրկական սրբոյ նշանէս, և ի հրեղէն լեզուաց Հոգւոյն ընդունողաց առաքելական նշխարս, և ի սուրբ Լուսաւորչին մերոյ աջէս և աթոռոյս»։ Քանի որ Ս. Աթոռն Հռոմկլայի գրեակումն էր (1148—1293 թ.) Ս. Աջը էլ այնտեղ էր գտնւում։ Վարդան պատմիչն, անշուշտ, ինքն այդ տեսել է Հռոմկլայ եղած ժամանակ, որ իւր ներբողի մէջ գրում է. «Եւ աջն լուսընկալ և շնորհաբաշխ հանդերձ այլ նշխարօքն որոյ (Ս. Լուսաւորչի) պատարագամատոյց սեղանովն, և գաւազանն կայ յաթոռ սրբութեան իւրոյ յաստուածահաստատն գրեակ Հռոմկլայն կոչեցեալ»։ Ս. Աջից զատ, որ Աղթամարից բերուեցաւ, յիշւում են և այլ սրբութիւններ։ Վասպուրականի Զորոյ վանքում պահւում էին * Ս. Գրիգորի հովուական գա-

* Թովմ. Արծր. Ա, 10.